

ԴԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
անձի և մասնագիտական գործունեության
գ/հ լաբորատորիայի գիտաշխատող,
հոգեբանական գիտությունների թեկնածու*

**ՈՒՂԵՎՈՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Հոդվածում ներկայացված է «ուղևոր – տրանսպորտ» համակարգում անձի հոգեբանական անվտանգության խնդիրը, ուր առանձնակի կարևորվում է ուղևորների տեղեկացվածության ապահովման ուղիների և միջոցների ուսումնասիրությունը: Ինչպես նաև քննարկվում են վստահության ձևավորման կառուցակարգերն ու տեսակները, որոնք հիմք են հանդիսանում անվտանգության ապահովման համար:

Հիմնաբառեր. հոգեբանական անվտանգություն, վստահություն, տեղեկատվություն, ուղևոր:

Առօրյա կյանքի բնույթն ու բովանդակությունը վերջին տարիներին ենթարկվել են բազում փոփոխությունների, որոնք անձի կենսագործունեության արդյունավետության ապահովման համար առաջ են բերել ինքնապահպանման բարձր պատասխանատվություն: Խոսքը վերաբերում է նրան, որ ներկայիս կենսագործունեությունը վտանգված է արտաքին գործոնների հագեցվածությամբ: Մարդու համար բավականին դժվար է դարձել «գլուխ հանել» իր շրջակա միջավայրից, իր հետ փոխներգործության մտնող հասարակությունից, սոցիալական գործոններից, տեղեկատվության հոսքից և տարաբնույթ բազմազանությունից: Առավելապես բարդ են անձի վարքային դրսևորումներն ու գործողությունները, երբ խոսքը վերաբերում է իր կենսագործունեությանը վտանգ սպառնացող երևույթների կամ գործոնների վաղ կանխատեսմանը: Կենսապայմանների անընդհատ փոփոխությունները հանգեցնում են նրան, որ մարդը կորցնում է վստահությունը՝ կասկածի տակ առնելով արտաքինից իրեն մատուցվող տեղեկատվությունը և, անգամ, սեփական կարողությունն ու ունակությունները: Վստահության և վտանգի կանխատեսման խնդիրն ավելի հրատապ է հատկապես այն իրավիճակներում, երբ մարդու սեփական անվտանգությունը կախված է լինում մեկ այլ մարդու կամ պայմանի անվտանգությունից: Նմանօրինակ իրավիճակ է «ուղևոր և տրանսպորտ» համակարգը:

Ներկայում երկրագնդի ողջ բնակչությունը ներառված է տեղից տեղ փոխադրվելու ավելի ընդլայնված ցանցի մեջ, որը բարձրացնում է տրանսպորտային և մարդկային հոսքի ինտենսիվությունն ու վթարների հաճախականությունը: Վերջին տարիներին հաճախակի դարձած տրանսպորտային վթարներն ու աղետները պատճառ են հանդիսանում նորովի քննարկելու մարդու անվտանգության հիմնախնդիրը՝ կապված փոխադարձ վստահության, տեղեկատվության համակարգման, վտանգի կանխատեսման և գնահատման, վարքի վերահսկողության հարցերի հետ:

Վերլուծելով անձի անվտանգության ապահովման հիմնախնդիրը «տրանսպորտ – ուղևոր» համակարգում՝ կարող ենք ընդգծել, որ անվտանգություն և ապահովություն ուղևորների մոտ ձևավորում է վարորդի կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ ունեցած վստահությունից: Վերջինիս ձևավորման մեջ առանձնակի կարևորվում է տեղեկացվածությունը:

Վստահությունը դրական (համենայն դեպս ոչ նեգատիվ) վարքի սպասումն է այն պայմաններում, երբ քո սեփական վարքը չի վերահսկվում [5, էջ 19]:

Բազմաթիվ հեղինակներ են բնութագրել վստահությունը և այն հիմնականում ներկայացրել են որպես՝

- ա) ռիսկային պայմաններում սպասումներ,
- բ) անվտանգության և ուրիշների կողմից ապահով վարքի սպասում,
- գ) ազնվության և արդարության սպասում,
- դ) հուսալիության և կայունության սպասում,
- ե) համոզվածություն, որ սպասելիքները կարդարանան [5; 2]:

Ինչպես տեսնում ենք վստահության ձևավորումն հիմնականում միտված է դիմացի որևէ գործողության սպասում՝ ուղղված սեփական ապահովությանը կամ բարեկեցությանը:

Վստահությունը՝ որպես պատրաստվածություն, մեկնաբանվում է որպես մյուսներից անկախ լինելու պատրաստվածությունը, որն առավել արտահայտվում է որպես ինքնավստահություն, երբ ռիսկային իրավիճակներում մարդը կարողանում է ոչ միայն ինքնատիրապետել, այլ նաև կառավարել ուրիշներին:

Վստահությունը՝ որպես հույս կամ լավատեսություն, հիմնականում կապված է դիմացինի հանդեպ ունեցած արդարության, հոգատարության, ներողամտության և այլ ապաստումների և գնահատումների հետ:

Վստահությունը՝ որպես սոցիալական հույզ, առաջադրվել և մեկնաբանվել է Ջ. Բարբալետոյի կողմից և բնութագրվում է որպես մարդ և հասարակություն, մարդ և միջավայր, մարդ և տեխնիկա, մարդ և մարդ փոխհարաբերություններում որպես այս կամ այն բանի հանդեպ ունեցած

համոզմունք՝ սպասելիքների և գիտելիքների (տեղեկացվածության) համադրում: Զ. Բարբալետտոյի կարծիքով՝ համոզվածությունը կարելի է բնութագրել որպես «անվտանգության սպասման հույզ» [5]:

Մենք գիտենք, որ մինչ քաղաքացին կօգտվի համապատասխան փոխադրամիջոցից, նա պետք է արդեն տեղեկացված լինի արտակարգ իրավիճակներում կամ վտանգի առկայության դեպքում ինչպիսի վարք է անհրաժեշտ ցուցաբերել: Դրա համար հասարակական կառույցները ձեռնամուխ են լինում անվտանգության կանոնների տեղեկատվության տարածման ու իրազեկման համար: Այդ միջոցներից են պաստառները, ցուցանակները, տեսահոլովակները, վտանգի ազգանշանային խորհրդանիշները կամ ձայնային ազդանշանները և այլն [6]:

Այս առումով 2015-16 թթ. ԵՊՀ անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիայում իրականացվել և դեռ շարունակվում են հետազոտությունները ուղևորի անձի հոգեբանական անվտանգության ապահովման գործոնների գնահատման ուղղությամբ: Մեր կողմից կատարված հետազոտական աշխատանքները միտված են երթևեկության ընթացքում փոխադրամիջոցների հետ կապված տարբեր վտանգավոր իրավիճակների հավանականության աստիճանի և դրանց առաջացման պատճառների դուբերմանը: Հետազոտությունն իրականացրել ենք ՀՀ տարածաշրջանում տրանսպորտային անվտանգության գնահատման հատուկ մշակված հարցարանով*: Հետազոտության արդյունքներից դուրս ենք բերել, որ «ուղևոր և տրանսպորտ» համակարգում հոգեբանական անվտանգության ապահովումը տեղի է ունենում ուղևորի պատրաստվածության, վտանգի կանխատեսման և գնահատման, վտանգավոր կամ ճգնաժամային իրավիճակներում անվտանգության ապահովման մասին տեղեկացվածությամբ և այլն [4]:

Հետազոտության արդյունքում պարզվել է նաև, որ անվտանգության ապահովման ազդարարման (տեղեկացման) միջոցները՝ պաստառները, ցուցանակները, ձայնային ազդանշանները և այլն, գրեթե անարդյունավետ են: Սա կարող է բացատրվել նրանով, որ ոչ թե ընտրված միջոցներն են տեղեկատվության ապահովման համար անարդյունավետ, այլ տեղեկատվությունը, որը կրում է այդ միջոցը: Այստեղ խնդիրը տեղեկատվության մատուցման, որակի և հասանելիության մեջ է: Այնուամենայնիվ անվտանգության ապահովման միջոցներից համեմատաբար կիրառական և արդյունավետ են գնահատվել ստորև ներկայացված միջոցները՝

1. տազնապի ազդարարման կոճակները/սեղմակները,

* Հարցարանը մշակվել է ՌԴ ՌԱԱ հոգեբանական ինստիտուտի հետ համագործակցությամբ, այն բաղկացած է 22 բաժնից և վերաբերում է տրանսպորտի տարբեր միջոցներից օգտվող ուղևորի հոգեբանական անվտանգության գնահատմանը:

2. ձայնային ազդարարը,
3. ինքնաշխատ տագնապային շչակը:
4. տեղեկատվական ցանցը (ՉՏՄ և համացանց):

Ինչպես տեսնում ենք անվտանգության ապահովման այս միջոցները, որոնք գնահատվել են առավել արդյունավետ, կրում են միայն վտանգի ազդարարման բնույթ: Դրանք իրենց մեջ չեն պարունակում տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կանխատեսել վտանգը, ինչպես կանխարգելել այն կամ ինչպիսի վարք դրսևորել արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում:

Անվտանգության ապահովման տեղեկատվական միջոցներից անարդյունավետ են գնահատվել թռուցիկները, վազող տողը և ուղևորին հրահանգավորումը: Անվտանգության կանոնների մասին տեղեկատվության ապահովումը պաստառներով, թռուցիկներով, վազող տողով անարդյունավետ են գնահատվել, քանի որ դրանք նկատելու կամ հասկանալու համար ուղևորներից հիմնականում պահանջում են ուշադրության կենտրոնացվածություն, ինչը առօրյա կյանքում ավելորդ լարվածություն է առաջացնում:

Ուսումնասիրելով տեղեկացվածության մակարդակը՝ ուղևորների մոտ փորձել ենք դուրս բերել հոգեբանական անվտանգության ապահովման այն գործոնները, որոնք անձի մոտ կարող են ձևավորել վստահություն փոխադրամիջոցի և վարորդի նկատմամբ: Հետազոտությունից պարզ է դարձել, որ վթարային իրավիճակներում անվտանգ և արդյունավետ վարքի կանոնների մասին փորձարկվողների 56% տեղեկացված է ոչ բավարար, 25%-ը ընդհանրապես տեղեկացված չէ, 19% - բավարար տեղեկացված են: Ուղևորների տեղեկացվածությունը հիմնականում բարձր է գնահատվել փոխադրամիջոցներում արգելված գործողությունների, տուժածին առաջին բուժօգնություն ցուցաբերելու առումով: Տեղեկացվածության ամենացածր գնահատականը եղել է վտանգի աղբյուրների, փրկարարական միջոցների, ազդարարման համակարգերի առումով:

Հաջորդ խնդիրը, որին ուշադրություն ենք դարձրել, դա սեփական վարքի կարգավորումն է՝ ելնելով անվտանգության ապահովման կանոններից: Ամենշատ խախտումները լինում են ամրագոտու հետ կապված (36%), վտանգի մասին տեղեկություն չհաղորդելը (20%) կամ վտանգի առկայությունն անտեսելը (15%): Իհարկե, կարող ենք ասել, որ հետազոտվող ուղևորների մեծ մասը տրանսպորտային փոխադրամիջոցի մեջ ցուցաբերում է վարքի վերահսկողություն՝ հատկապես ծխելու (91%), ոգելից խմիչքներ (87%), արգելված նյութեր օգտագործելու (85%) առումով: Վերլուծելով

այս արդյունքները՝ կարող ենք նշել, որ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ ուղևորների լայն շրջանում կա տեղեկացվածություն, բայց չկա վտանգի կամ վտանգավորության չափի գնահատում:

Այն հարցին, թե երբ է ավելի արդյունավետ տեղեկացվածություն ստանալ անվտանգության կանոնների մասին, հետազոտված ուղևորների 82,6% գտնում է, որ այն արդյունավետ է իրականացնել ուղևորության ընթացքում, իսկ 10,6%՝ մինչև ուղևորությունը:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները, որոնք դեռևս շարունակվում են ենթարկվել մանրամասն հոգեբանական որակական վերլուծության, կարող ենք փաստել, որ հոգեբանական անվտանգության ձևավորման հիմքում ընկած է վստահությունը սեփական անձի (գիտելիքների և կարողությունների) և ուրիշի անձի (լավատեսության և սպասումների) նկատմամբ, որն էլ իր հեթին ձևավորում է տեղեկացվածությունից: Այս հետազոտության արդյունքում կարելի է ենթադրել, որ տեղեկացվածության որակը և անձի գիտելիքների կայունությունը բարձրացնում են անվտանգության կանխատեսման հեռանկարները, ինչը կարող է արտակարգ իրավիճակներում վարքի կարգավորման հիմք հանդիսանալ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն, Հեղ. **Ռ. Վ. Աղուզումջյան, Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Ե. Բ. Մուրադյան, Դ. Յ. Սարգսյան, Ծ. Ս. Ամիրյան**, //Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 142 էջ:

2. Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրները, Հեղ. **Ռ. Վ. Աղուզումջյան, Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան**, և ուրիշներ//Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 164 էջ:

3. **Агузумцян Р. В., Папоян В. Р., Галстян А. С., Мурадян Е. Б. Саргсян Д. Ю.**, Психологическая безопасность в системе человек - транспорт, Ер.: Изд. ЕГУ, 2017, 84с.

4. **Агузумцян Р. В., Папоян В. Р., Галстян А. С., Е. Б. Мурадян**, Психологическая безопасность пользователей транспорта // Актуальные проблемы психологии труда, инженерной психологии и эргономики, Выпуск 7, Изд. РАН, М.: 2015, 478-515с.

5. **Ильин Е. П.**, Психология доверия, СПб, Питер, 2013, 288с.

6. Психология экстремальных ситуаций (Сост. **А. Е. Тарас, К. В. Сельченко**) - Мн.: Харвест, 1999, 480с.

ДИАНА САРГСЯН

*Сотрудник научной исследовательской
лаборатории психологии личности и
профессиональной деятельности ЕГУ,
кандидат психологических наук*

ИНФОРМИРОВАННОСТЬ ПАССАЖИРОВ КАК ПРЕДУСЛОВИЕ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

В данной статье представлена проблема психологической безопасности в системе человек – транспорт. Особо подчеркивается важность исследования средств и путей обеспечения информированности пассажиров. Также рассматриваются виды и механизмы формирования доверия, которые являются основой для развития психологической безопасности.

Ключевые слова: психологическая безопасность, доверие, информация, пассажир.

DIANA SARGSYAN

*PhD researcher of Scientific Laboratory
of Personality Psychology and
Professional Activity, YSU*

AWARENESS OF PASSENGERS AS A PRECONDITION FOR PROVIDING PSYCHOLOGICAL SAFETY

This article presents the problem of psychological safety in the human-transport system. Particular emphasis is placed on the importance of researching the means and ways to ensure the awareness of passengers. Types and mechanisms of formation of trust are also considered which are the basis for the development of psychological safety.

Keywords: psychological safety, trust, information, passenger.